ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

XI-դասարան

1.Գրական ֆիդայի շրջասույթով:
«Անդաստան» բանաստեղծությունը «Հային երգը» ժողովածուից է, որը գրվել է 1914--15 թվականներին, սակայն լույս է տեսել միայն 1921-ին: Անդաստանը աշխարհի չորս ծագերի օրհներգությանը նվիրված արարողություն է, մատուցվում է նաև անդաստանների ու արտերի պտղաբերության և արգասավորության համար:Բանաստեղծությունն ունի 4-վեցատող՝ ըստ աշխարհի չորս կողմերի օրհնության:Բանաստեղծը օրհնում է Խաղաղությունը, Բերրիությունը, Առատությունը, Պտղաբերումը:

2.Շանթի արվեստը հայտնաբերում է մարդու զգացմունքի ահռելի ուժը, նրբավորումների անվերջ հնարավորությունները . խորհրդանիշների միջոցով նա բացահայտում է մարդու ներաշխարհը, ինչպես Տերյանը և Մեծարենցը:
Հրաշք աղջիկ , հարազատ և օտար աստղեր, իրիկուն, հովիկ, հյուղ, Ծովիկ, Քողավոր, Միգանուշներ, Հովիկներ և այլն: Երազային աշխարհով են նման:

3.Եղիշե Չարենցը 16-տողանոց բանաստեղծությունը զետեղել է պոեմների շարքում: Չարենցը ընդվզում է բոլոր սին խոստումների ու թերացումների դեմ, իրական Հայաստանի փոխարեն առասպելական Հայաստան տեսնողների դեմ, ովքեր իդեալականացնում էին անցյալը՝ չտեսնելով արյունոտ ներկան: Սա խաբված որդու ընդվզում է: Հակադրում է Հովհաննես Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» երկին:

4.«Երջանիկ մահը» նովելի հեղինակը նորավեպի իշխան Գրիգոր Զոհրապն է: Նորավեպը շոշափում է կյանքի և մահվան խնդիրները. Պետք է հաղթել մահին՝ կյանքը սիրելով . սիրած մարդու թևերի վրա մեռնելը արդեն կյանքի հաղթանակն է:
Այո՛, կինը երջանկության , սիրո, նվիրումի քուրմ է , եթե սիրում է և սիրված է:
Դառն է կնոջ լացը